

Հարցաշար

հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
10-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Ահա դարերի խորքից դեպի մեզ է գալիս համառ ու աննկուն մի ճամփորդ: Որքան մոտենում է, այնքան ավելի շիտակ է դառնում նրա կեցվածքը, այնքան վայելուչ ու խրոխտ՝ նրա տեսքը.

- Ո՞վ էս դու և որտեղի՞ց էս գալիս, ճամփո՞րդ:

- Ես այն արդար ցորենի ոսկեծուփ արտն եմ, որ տրորվել է օտար այրուծիների սմբակների տակ, այրվել խորշակից ու երաշտից, և որից փրկված մի բուռ ցորենը հասել է գալիքի ցանքին ու այսօր շոայլ բերք է տալիս:

Խաղողի այն որթատունկն եմ, որի գետնատարած արմատները հասնում են մինչև Հայասսա և Նաիրի, և որի կենսառաք ու հյութեղ պտուղը հավերժորեն պիտի քաղցրացնի իմ սերունդներին:

Առասպելական եղեգան փողի հրից ու բոցից ծնված երկիրն եմ, որ մարդկության վաղնջական օրրաններից մեկն է:

Գալիս եմ անսանձ ու փրփրակոհակ գետերի ինքնիշխան երկրից՝ Բիայնայից, որտեղ ժայռերից ամրոցներ էին կառուցում և սրբատաշ քարերին փորագրում Երևանի ծննդյան վկայականը:

Սասնա բարձր սարերից եմ գալիս, որտեղ ապավինեցի հեքիաթին ու հրաշքին՝ գառնարած Դավթի սրով դուրս քշելով իմ հողից Մսրա անհամար զորքը:

Ես ...

1. Շարունակի՛ր բնագրի անավարտ թողած միտքը 2-3 նախադասությամբ՝ պահպանելով տեքստի ոճական շարադրանքը: (1, 5 միավոր)

2. Տեքստից դուրս գրի՛ր կազմությամբ բարդ հինգ ածական: (0,5 միավոր)

3. Գրի՛ր բառային և բառաքերականական համանունների մեկական զույգ: Բացատրի՛ր յուրաքանչյուր բառը: (1 միավոր)

4. Գրի՛ր *աննկուն*, *խրոխտ*, *վաղնջական*, *օրրան*, *կենսառաք* բառերի երկուական հոմանիշ: (1 միավոր)

5. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր:

Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ:

Ի ծագել արեգական, կորնչին աստեղք: (1 միավոր)

6. Գրի՛ր շարադրություն «Երազանքների իմ մոլորակը» վերնագրով: (5 միավոր)